# Պուգոն հավատ է ընծայում Այազ Մութալիբովին

ԽՍՀՄ ներքին գործոց նախարար Բորիս Պուգոն երկուշաբթի օրը ԽՍՀՄ Գերագույն խորհրդում հայտարարեց, թե ինքը ոչ մի հիմք չունի չհավատալու Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովի այն հավաստիացմանը, թե Ադրբեջանը կպահպանի կարգուկանոն կոնֆլիկտի շրջանում և թույլ չի տա խաղաղ բնակչության անօրինական տեղահանումը: Նախարարը հրաման է տվել Ադրբեջանի այդ շրջանի ԽՍՀՄ ներքին ուժերին խաղությունը վերցնել իրենց ձեռքը: Ըստ նրա, այդ շրջանում խմբավորվել են 500-1000 գրոհայիններ զրահամեքենաներով և հրթիռային զենքով, ինչպես նաև հրթիռային կայանքի միջոցներով: Նա հայտարարեց նաև, որ Ադրբեջանի Շահումյանի շրջանի երեք գյուղը հայ գրոհայինները դարձրել են լավ ամրացված շրջան: Այնուհետև նա ավելացրեց, որ հուլիսի 6-ին ադրբեջանական միլիցիան գնդակոծվել է Մանաշիդը: Բուզլուխ գյուղում անցկացվել անձնագրային ռեժիմի ստուգում, բայց հանդիպել են դիմադրության: Սպանված են 3 ադրբեջանցի միլիցիոներ, 10-ը վիրավորվել են, որոնցից 2-ը եղել են ադրբեջանական ՊԱԿ-ի աշխատակիցներ:

Չստուգված տվյալներով,- ասել է Պուգոն,- սպանվել են մեկ և վիրավորվել 4 հայեր: Ըստ նախարարի, կանայք և երեխաները այնտեղից տեղափոխվել են: ■